ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ձեռնարկ մանկավարժների համար

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ձեռնարկ ուսուցիչների, աջակցող թիմի մասնագետների, ուսուցչի օգնականների, մանկավարժական կրթություն ստացող ուսանողների և ծնողների համար

ԵՐԵՎԱՆ - 2025

ՀՏԴ
ԳՄԴ
Ա
Ուսուցման համալիր մոտեցումները կրթության առանձնահատուկ պայմանների 3-րդ և 4-րդ աստիճանի մանկավարժահոգեբանական աջակցության կարիք ունեցող երեխաների համար: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ ուսուցիչների, աջակցող թիմի մասնագետների, ուսուցչի օգնականների, մանկավարժական կրթություն ստացող ուսանողների և ծնողների համար/ Հարությունյան Մ. Ռ.; Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.- - Եր.: Էդիթ Պրինտ, 2025. - 60 էջ:

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 03.02.2025 թվականի 324-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ Լ.Ա. Մնացականյան

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Թադևոսյան Հ. Վ.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Ս. Վ.

Հեղինակ՝
Հարությունյան Մարիաննա Ռուբենի, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Խմբագիր՝ Սարգսյան Հ. Ա.

Համակարգչային ձևավորում՝ Սարոյան Լ. Գ., Դավթյան Հ. Լ.

Նկարները գեներացված են արհեստական բանականության կողմից:

Սույն ձեռնարկի նպատակն է աջակցել այն ուսուցիչներին, աջակցող թիմի մասնագետներին, ուսուցչի օգնականներին, մանկավարժական կրթություն ստացող ուսանողներին և ծնողներին, ովքեր ներգրավված են կրթության առանձնահատուկ պայմանների 3-րդ և 4-րդ աստիճանի մանկավարժահոգեբանական աջակցության կարիք ունեցող երեխաների ուսուցման գործընթացում:

ISBN

ՀՏԴ
ԳՄԴ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ 19

ԴԵՊՔԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ 38

ՎԵՐՋԱԲԱՆ 56

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 59

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս ուսումնամեթոդական ձեռնարկը նախատեսված է ուսուցիչների, աջակցող թիմի մասնագետների, ուսուցչի օգնականների, մանկավարժական կրթություն ստացող ուսանողների և ծնողների համար, ովքեր ներգրավված են կրթության առանձնահատուկ պայմանների 3-րդ և 4-րդ աստիճանի մանկավարժահոգեբանական աջակցության կարիք ունեցող երեխաների ուսուցման գործընթացում: Այն նպատակ ունի ներկայացնել ուսուցման համալիր մոտեցումներ, որոնք ուղղված են այդ երեխաների ներառական կրթության արդյունավետ կազմակերպմանը և նրանց ինչպես ուսումնական, այնպես էլ առօրյա հմտությունների կառավարման առաջընթացի ապահովմանը:

Կրթության առանձնահատուկ պայմանների 3-րդ և 4-րդ աստիճանի մանկավարժահոգեբանական աջակցության կարիք ունեցող երեխաների խմբում ներառվում են այնպիսի սովորողներ, ովքեր ունեն բազմակի խանգարումներ, և առկա են այնպիսի մարտահրավերներ, որոնք խիստ ազդեցություն են թողնում նրանց ուսումնական գործընթացի, առօրյա կյանքի հմտությունների և սոցիալական ներգրավվածության վրա: Նման պայմաններում կրթական միջավայրի, դասավանդման մեթոդների և աջակցության ծրագրերի ճիշտ կառուցումը կարևոր է երեխայի զարգացումն ապահովելու համար:

Այս ձեռնարկում ներկայացված են ուսուցման անհատականացված և ճկուն մեթոդներ, ֆիզիկական միջավայրի ստեղծման գործնական լուծումներ, զգայական միջավայրի ստեղծման գործնական լուծումներ, վարքագծի կառավարման գործնական լուծումներ և

մասնավոր դեպքերի նկարագրություններ՝ առավել արդյունավետ և պարզ պատկերներ ստանալու համար:

Ձեռնարկը ներառում է թե՛ տեսական գիտելիքներ, թե՛ գործնական խորհուրդներ և օրինակներ, որոնք կարող են օգտակար լինել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատանքում: Այն մշակվել է այնպես, որ ընթերցողները կարողանան կիրառել ներկայացված մոտեցումները ինչպես ուսումնական գործընթացում, այնպես էլ առօրյա կյանքում՝ նպաստելով երեխաների հնարավորինս լիարժեք ներառմանը հասարակական կյանքում:

Այս ձեռնարկը միտված է այնպիսի հմտությունների ձեռքբերմանը, որոնք կօգնեն մանկավարժներին, մասնագետներին և ծնողներին աշխատել համատեղ և ձևավորել համընդհանուր աջակցող համայնք, որտեղ յուրաքանչյուր երեխա կունենա զարգացման և ինքնադրսևորման հնարավորություն:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ովքե՞ր են կրթության առանձնահատուկ պայմանների 3-րդ և 4-րդ աստիճանի մանկավարժահոգեբանական աջակցության կարիք ունեցող երեխաները

Ծանր և բազմակի խանգարումները այնպիսի բարդ վիճակներ են, երբ երեխան միաժամանակ ունենում է երկու կամ ավելի խանգարումներ, որոնք փոխադարձաբար ազդում են միմյանց վրա և բարդացնում երեխայի ֆիզիկական, մտավոր, զգայական և սոցիալ-հուզական զարգացումը: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ այս խանգարումները ներառում են շարժողական դժվարություններ, ինտելեկտուալ, զգայական, ինչպես նաև հաղորդակցման խանգարումներ (WHO, 2011):

Երեխաները, որոնք ունեն ծանր և բազմակի խանգարումներ, առօրյա կյանքում բախվում են բազմաթիվ սահմանափակումների: Նրանք դժվարանում են ինքնուրույն տեղաշարժվել, հոգալ իրենց անձնական կարիքները, ընկալել և մշակել տեղեկատվությունը, ձեռք բերել գործնական հմտություններ, պատշաճ սոցիալական վարքագիծ դրսևորել և հաստատել սոցիալ-հուզական կապեր (Gargiulo & Bouck, 2019): Որպես կանոն, հենց այս խմբի երեխաներն են ունենում կրթության առանձնահատուկ պայմանների 3-րդ և 4-րդ աստիճանի մանկավարժահոգեբանական աջակցության կարիք:

Կրթության առանձնահատուկ պայմանների 3-րդ և 4-րդ աստիճանի մանկավարժահոգեբանական աջակցության կարիք ունեցող երեխաների կարիքների փոխհատուցման հնարավորությունները խիստ սահմանափակված են, ինչի հետևանքով

նրանք դժվարանում են կողմնորոշվել առօրյա իրականության մեջ, ընկալել իրենց, մյուսներին և շրջակա աշխարհը: Այս երեխաների կրթական կարիքները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ սեփական անձի, այլ անձանց, շրջապատող առարկաների և սոցիալական աշխարհի **գիտակցում**: Այս կարիքների բավարարմանը նպաստում են ինչպես աջակցող մասնագետները (ուսուցիչներ, հոգեբաններ, հատուկ մանկավարժներ և այլն)՝ կիրառելով տարբեր մեթոդներ և մոտեցումներ, այնպես էլ երեխայի ընտանիքն ու միջավայրային պայմանների համապատասխան հարմարեցումները:

Այս երեխաների հետ իրականացվող աշխատանքի հիմնական նպատակն է հնարավորինս նախապատրաստել նրանց ինքնուրույն կյանքին՝ նպաստելով ինքնավստահության ձևավորմանն ու հասարակության կյանքին ակտիվ մասնակցությանը: «Ինքնուրույն կյանք» հասկացության ներքո նկատի է առնվում այլ մարդկանցից մշտական կախվածության հնարավորինս բացառումը կենսագործունեության հիմնական ոլորտներում, ինչպիսիք են տեղաշարժումը, ինքնասպասարկումը, հաղորդակցումը և սոցիալ-հուզական փոխազդեցությունը: Այս երեխաների հետ աշխատանքը և տրամադրվող աջակցությունը նպատակ ունեն հաղթահարել առկա դժվարությունները, կանխարգելել սահմանափակումները և զարգացնել նոր հմտություններ (UNESCO, 2017):

Երեխաների կրթական միջավայրը պետք է լինի մատչելի, հարմարեցված նրանց կարիքներին և խթան հանդիսանա նրանց հետագա զարգացման համար: Կրթական միջավայրը պետք է նպաստի տեղեկատվության ընկալմանը, տարածական կողմնորոշմանը և շփման ու հաղորդակցման հեշտացմանը:

Ծանր և բազմակի խանգարումներ ունեցող երեխաների մոտ հաճախ առկա են.

Ֆիզիկական խանգարումներ, որոնք արտահայտվում են շարժողական հմտությունների սահմանափակումներով ազդելով տեղաշարժման և առարկաների հետ փոխազդեցության վրա:

Ճանաչողական ոլորտի խանգարումներ, որոնք արտահայտվում են մտավոր

զարգացման հապաղումներով, մտածողության հետ կապված դժվարություններով, հիշողության և ուշադրության խանգարումներով:

Շփման-հաղորդակցման խանգարումներ՝ կապված խոսքի արտահայտման և լեզվի կիրառման դժվարությունների հետ, որոնք էլ իրենց հերթին խոչընդոտում են շփմանն ու հաղորդակցմանը:

Զգայական խանգարումներ, որոնք պայմանավորված են զգայարանների գերզգայունության կամ թերզգայունության հետ:

Վարքագծային խանգարումներ, որոնք բնորոշվում են վարքագծի կարգավորման դժվարություններով, սոցիալական հմտությունների պակասով:

Ծանր և բազմակի խանգարումների առաջացման պատճառները բազմազան են և կարող են լինել գենետիկական, նախածննդյան, ծննդյան ժամանակ առաջացած կամ պայմանավորված հետծննդյան տարբեր գործոններով: Հետազոտությունների համաձայն՝ հղիության ընթացքում մոր հիվանդությունները, գենետիկական անոմալիաները, ինֆեկցիաները և սնուցման խանգարումները կարող են իրենց ազդեցությունն ունենալ և երեխայի մոտ առաջացնել բազմակի խանգարումներ (WHO, 2011):

Ի՞նչ է անհատական ուսուցման պլանը

Անհատական ուսուցման պլանը (ԱՈՒՊ) կրթության ծրագրի կազմակերպման ձև է, որը նախատեսված է հաշվի առնելու սովորողի անհատական կրթական առանձնահատկությունները, կարիքները և կրթական նպատակները: Այն կարող է կիրառվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ներառյալ՝ տաղանդավոր և օժտված երեխաների կրթական գործընթացում: ԱՈՒՊ-ի հիմնական նպատակներն են.

- հնարավորություն տալ սովորողին զարգանալ իր կարողությունների առավելագույն չափով,

- կրթական բովանդակությունը դարձնել ավելի մատչելի,
- խթանել սովորողի ինքնուրույնությունն ու սոցիալական ներառվածությունը:

ԱՈՒՊ-ը կազմվում է՝ հաշվի առնելով սովորողի ֆիզիկական և մտավոր զարգացման առանձնահատկությունները, սոցիալական և հուզական կարիքները, առողջական վիճակը: Այն սովորողի համար սահմանում է հստակ կրթական նպատակներ՝ հիմնված նրա հնարավորությունների վրա: ԱՈՒՊ-ով են սահմանվում նաև հարմարեցված ուսումնական նյութերը և մեթոդները, որոնք համապատասխանում են սովորողի կարողություններին և սովորելու ոճին:

ԱՈՒՊ-ը ապահովում է, որ յուրաքանչյուր սովորող ստանա իր կարիքներին և հնարավորություններին համապատասխան կրթություն՝ նպաստելով նրա ներառմանը և լիարժեք զարգացմանը (Ա. Սվաջյան, Հ. Ադամյան, Ա. Գարեգինյան, Լ. Մարգարյան, Լ. Հակոբյան, Գ. Հարությունյան, 2024):

Դեպքի նկարագրություն

Անիի պատմությունը

Անին 9 տարեկան է: Նա ունի մանկական ուղեղային կաթված և լսողության խանգարում: Անին դժվարանում է տեղաշարժվել և հաղորդակցվել իր դասընկերների հետ: Ուսուցիչը, համագործակցելով հատուկ մանկավարժի և լոգոպեդի հետ, մշակել է Անիի ԱՈՒՊ-ը, որը ներառում է.

1. **Ֆիզիկական աջակցություն՝** դասասենյակի հարմարեցում տեղաշարժման հնարավորության և հեշտացման համար: Երեխայի նստարանի դիրքի ճիշտ տեղակայում աչքի կոնտակտի ապահովման նպատակով, որպեսզի նա կարողանա հաղորդակցվելիս ընթերցել իր դասընկերների շուրթերը և/կամ տեսնել ժեստերը:
2. **Հաղորդակցման միջոցներ՝** պատկերների, քարտերի և ժեստերի լեզվի

օգտագործում:

3. **Սոցիալական ներգրավում՝** խմբային խաղերի միջոցով սոցիալական հմտությունների զարգացում, համագործակցային առաջադրանքների ներկայացում:

Ծանր և բազմակի խանգարումներ ունեցող սովորողների ուսուցումը պահանջում է համալիր և անհատականացված մոտեցում: Ուսուցիչները, ինչպես նաև ուսուցչի օգնականները և աջակցող թիմի մասնագետները պետք է լինեն ճկուն, ստեղծագործ և պատրաստ լինեն համագործակցել ծնողների և միմյանց հետ: Օգտագործելով գործնական լուծումներ և գիտականորեն հիմնավորված մեթոդներ, հնարավոր է ապահովել այս երեխաների լիարժեք ներառումը կրթական գործընթացում:

Կարևոր է հիշել, որ ԱՈՒՊ-ը ոչ միայն աջակցում է սովորողների ակադեմիական առաջադիմությանը, այլև նպաստում նրանց սոցիալական, հուզական և ֆիզիկական զարգացմանը: Սա առավել քան կարևոր է կրթության առանձնահատուկ պայմանների 3-րդ և 4-րդ աստիճանի մանկավարժահոգեբանական աջակցության կարիք ունեցող երեխաների ներգրավման, ներառական կրթության զարգացման և հավասար հնարավորությունների ապահովման գործում:

ԱՈՒՊ-ի արդյունավետ մշակումը և իրականացումը հնարավոր է միայն համագործակցության միջոցով: Կենտրոնանալով սովորողի կարիքների վրա, օգտագործելով նորարարական ռազմավարություններ և համագործակցելով մասնագետների և ծնողների հետ՝ մենք կարող ենք ստեղծել կրթական միջավայր, որտեղ յուրաքանչյուր սովորող կարող է հասնել իր ամբողջ ներուժի իրացմանը: Այս ամենով հանդերձ պետք է միշտ հիշել սովորողների կրթական կարիքների անհատականությունը և բազմազանությունը՝ ԱՈՒՊ-ը կազմել իրատեսական և կիրառելի տվյալ սովորողի համար, տվյալ կրթական համատեքստում:

Նպատակ և նպատակի սահմանում

Ներկայիս կրթական միջավայրը պահանջում է անհատականացված մոտեցում, որպեսզի յուրաքանչյուր սովորող կարողանա իրացնել իր ամբողջ ներուժը: ԱՈւՊ-ը, որպես այդպիսին, հանդիսանում է այդ մոտեցման հիմնաքարը՝ ապահովելով յուրաքանչյուր սովորողի համար անհատականացված ուսուցման ուղիներ, որոնք համապատասխանում են նրա կարիքներին, կարողություններին և նպատակներին (Brown & Snell, 2022; Turnbull, Turnbull & Wehmeyer, 2020): Ծանր և բազմակի խանգարումներ ունեցող սովորողների ուսուցման համար կրթական նպատակներ սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել նրանց յուրահատուկ կարիքները, հնարավորությունները և զարգացման ներուժը: Ստորև ներկայացված են այն քայլերը, որոնց միջոցով և որոնց վրա հիմնվելով՝ կարելի է սահմանել նպատակներ՝ երեխայի կրթական կարիքին համապատասխան ուսուցման արդյունավետության բարձրացման համար:

Քայլ	**Նկարագրություն, օրինակներ**
Ուսանողի կարիքների և հնարավորությունների բազմակողմանի գնահատում **Գնահատման արդյունքները հիմք են հանդիսանում անհատականացված նպատակների**	• *Ֆիզիկական կարողություններ,* • *Ճանաչողական ունակություններ,* • *Սոցիալական և հուզական զարգացում,* • *Հաղորդակցման հմտություններ,* • *Ինքնուրույնության մակարդակ:*

ձևակերպման համար:	
Իրատեսական մոտեցում	• *Նպատակները պետք է լինեն իրատեսական և հասանելի՝ հաշվի առնելով սովորողի ներկա մակարդակը:* • *Շեշտը դնել ոչ միայն ակադեմիական առաջադիմության, այլև գործնական հմտությունների, ինքնուրույնության և կյանքի որակի բարելավման վրա:*
SMART նպատակների օգտագործում	• ***Specific (հստակ և կոնկրետ)***՝ *ձևակերպված այնպես, որ բոլորը հասկանան դրանց էությունը և ակնկալիքները,* • ***Measurable (չափելի)***՝ *հնարավոր լինի հետևել, չափել առաջընթացը,* • ***Achievable (հասանելի)***՝ *իրատեսական և սովորողի հնարավորություններին համապատասխան,* • ***Relevant (համապատասխան)***՝ *սովորողի կարիքներին, առօրյա կյանքին և միջավայրին համահունչ,* • ***Time-bound (ժամանակի մեջ հստակ)***՝ *հստակ նշված ժամկետներում:*
Կրթական նպատակների սահմանման հիմնական ոլորտային ուղղությունները **Նպատակները լինում են ճկուն և փոփոխվող՝ համապատասխանելով**	• **Հաղորդակցման զարգացում** ✓ *Օրինակ՝ սովորել և կիրառել հաղորդակցման պարզ ձևեր (մակարդակին համապատասխան AAC համակարգերի կամ ժեստերի միջոցով):* • **Ինքնասպասարկման հմտություններ** ✓ *Օրինակ՝ սնունդ վերցնելու, հագնվելու, անձնական հիգիենայի հմտություններ:* • **Սոցիալական ինտեգրում** ✓ *Օրինակ՝ մասնակցել հասարակական փոքր խմբային գործողություններին:*

երեխայի առաջընթացին կամ այլընտրանքային կարիքներին:	• **Մանր և խոշոր մոտորիկայի զարգացում** ✓ *Օրինակ՝ կատարել պարզ ֆիզիկական գործողություններ, ինչպիսիք են՝ ձեռքերի և ոտքերի թեթև շարժումներ, մատներով մանր գործողություններ, ապլիկացիաների պատրաստում՝ օրթոպեդիկ սարքերի կիրառմամբ:* • **Սովորելու հմտությունների զարգացում** ✓ *Օրինակ՝ կարճ ժամանակահատվածում կենտրոնանալ պարզ առաջադրանքի վրա, պահպանել ուշադրությունը՝ հաշվի առնելով երեխայի նախասիրությունները:*
Ընտանիքի և մասնագետների համագործակցություն	• *Աջակցության պլանավորման և նպատակների սահմանման գործընթացում ներգրավել ընտանիքի անդամներին, լոգոպեդներին, ֆիզիոթերապևտներին, էրգոթերապիստներին, հոգեբաններին: Անհրաժեշտության դեպքում ավելացնել այլ մասնագետների:* • *Ստեղծել նպաստավոր պայմաններ հնարավորինս արդյունավետ և համակարգված համագործակցության համար:*
Մշտադիտարկում և վերագնահատում	• *Կայուն պարբերականությամբ (օրինակ՝ եռամսյակային) վերագնահատել նպատակների իրագործումը:* • *Անհրաժեշտության դեպքում կատարել նպատակների կամ գործողությունների պլանի փոփոխություններ և վերաձևակերպումներ:*

Վերոնշյալ քայլերի հաջորդականությունը օգնում է ստեղծել անհատականացված և նպատակային ուսուցման միջավայր, որն աջակցում է ծանր և բազմակի խանգարումներ ունեցող սովորողների զարգացմանը և սոցիալական ներառմանը (Brown & Snell, 2022):

Նպատակների սահմանման ժամանակ կարևոր է հաշվի առնել հետևյալ գործոնները.

Հստակություն և ուղղություն: Հստակ սահմանված նպատակները ուսուցիչների, սովորողների և ծնողների համար ապահովում են որոշարկված պատկերացում սպասումների և ակնկալիքների վերաբերյալ: Դա օգնում է կենտրոնանալ առաջնահերթությունների վրա և արդյունավետ կառավարել ժամանակը և ռեսուրսները:

Մոտիվացիա և ինքնավստահություն: Իրատեսական նպատակները, որոնք հասանելի են սովորողի համար, խթանում են նրա ինքնավստահությունը և մոտիվացիան: Երբ սովորողը տեսնում է, որ կարողանում է հասնել սահմանված նպատակներին, նրա ինքնագնահատականը բարձրանում է, և նա ինքնըստինքյան ձգտում է ավելիին:

Առաջադիմության գնահատում: Չափելի նպատակները թույլ են տալիս գնահատել սովորողի առաջադիմությունը և անհրաժեշտության դեպքում կատարել փոփոխություններ ուսուցման մեթոդներում կամ ռազմավարություններում:

SMART նպատակի սահմանման օրինակ

Նպատակ: *3 ամսվա ընթացքում սովորողը կկարողանա օգտագործել պարզ հաղորդակցման քարտեր (AAC համակարգ)՝ իր հիմնական կարիքները (սնունդ, ջուր, խաղալիք և այլն) արտահայտելու համար նվազագույնը 70% ճշգրտությամբ:*

SMART վերլուծություն

1. **Specific (Հստակ):** Նպատակն ուղղված է սովորողի հաղորդակցման հմտությունների բարելավմանը՝ օգտագործելով հատուկ հաղորդակցման քարտեր:

2. **Measurable (Չափելի):** Ընդգծված է հստակ չափանիշ առաջընթացի չափման համար 70% ճշգրտությամբ:
3. **Achievable (Հասանելի):** Նպատակը իրատեսական է՝ հաշվի առնելով սովորողի ներկայիս ունակություններն ու մասնագետների աջակցությունը:
4. **Relevant (Համապատասխան):** Հաշվի է առնված, որ երեխայի հաղորդակցման ունակությունների զարգացումը էական է նրա անձնական կարիքների արտահայտման համար և կնպաստի նրա կյանքի որակի բարելավմանը:
5. **Time-bound (Ժամանակի մեջ հստակ):** Նպատակը պետք է իրագործվի 3 ամսվա ընթացքում:

Ձևակերպված SMART նպատակների օրինակներ

- ✓ ***1 ամսվա նպատակ***՝ *«Սովորողը մեկ ամսվա ընթացքում կկարողանա ընտրել ճիշտ պատկերային քարտ՝ իր 2 հիմնական կարիքները արտահայտելու համար (զուգարանից օգտվել, ջուր խմել)»:*
- ✓ ***3 ամսվա նպատակ***՝ *«Սովորողը 3 ամսվա ընթացքում կկարողանա քարտերի միջոցով արտահայտել 4 տարբեր գործողություններ (նկարել, ուտել, լողանալ, քայլել)՝ առանց լրացուցիչ օգնության»:*
- ✓ ***6 ամսվա նպատակ***՝ *«Սովորողը 6 ամսվա ընթացքում կկարողանա ըստ իմաստի օգտագործել 10 նոր քարտ անկախ իրավիճակներում, ինքնուրույն, առանց օգնության»:*

Ներկայացվող առաջադրանքները կօգնեն ուսուցիչներին զարգացնել SMART նպատակների ձևավորման և կիրառման հմտություններ, ինչը կարևոր է ինչպես հատուկ կարիքներով սովորողների, այնպես էլ ընդհանուր կրթական գործընթացի համար:

Առաջադրանքներ

1. Սահմանե՛ք SMART նպատակ մանկական ուղեղային կաթված ունեցող երեխայի համար, ով ունի զգայական ինտեգրման խանգարում:
2. Կազմե՛ք ծրագիր, որը ներառում է SMART նպատակներ տարբեր ուսումնական փուլերի համար, օրինակ՝ շաբաթական, ամսական և եռամսյակային նպատակներ:
3. Արդյո՞ք ներկայացված նապատակը՝ «Սովորողը կկարդա 5 պարզ նախադասություն՝ օգտագործելով ուսուցչի օգնությամբ տրամադրված բառարան-գործիքը», բավարարում է SMART չափանիշներին:
4. Սահմանե՛ք SMART նպատակներ հետևյալ սցենարներից մեկի համար.
   - Սովորողը դժվարությամբ է կատարում պարզ ինքնասպասարկման գործողություններ:
   - Սովորողը չի կարողանում ուշադրությունը կենտրոնացնել դասի ընթացքում:
   - Սովորողը չի կարողանում արտահայտել իր կարիքները:

Ինչպիսի՞ն պետք է լինի կրթական միջավայրը ծանր և բազմակի խանգարումներ ունեցող երեխաների համար

Կրթության առանձնահատուկ պայմանների 3-րդ և 4-րդ աստիճանի մանկավարժահոգեբանական աջակցության կարիք ունեցող երեխաների կրթական միջավայրը պետք է լինի հատուկ հարմարեցված՝ հաշվի առնելով նրանց ֆիզիկական, մտավոր և զգայական կարիքները: Այն ունի հատուկ նպատակ՝ նպաստել երեխաների զարգացմանը, ինքնուրույնության խթանմանը և հասարակությանն առավելագույնս ներառմանը:

Այս երեխաների համար կրթական միջավայր ստեղծելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ կարևոր սկզբունքները.

1. **Համապարփակ մատչելիություն**
   - ✓ Ֆիզիկական միջավայրի հարմարեցում (փոխադրամիջոցներ, սայլակների համար հարմարեցված դասասենյակներ, սանհանգույցներ):
   - ✓ Տեխնոլոգիական աջակցության ապահովում (կոմունիկացիոն սարքեր, ուսումնական հատուկ տեխնոլոգիաներ):
2. **Անհատականացված մոտեցում**
   - ✓ Յուրաքանչյուր երեխայի կարիքներին և կարողություններին համապատասխան ուսումնական պլանի՝ ԱՈւՊ-ի առկայություն:
   - ✓ Պրակտիկ գործունեության վրա հիմնված ուսուցում:
3. **Սոցիալական ներառում**
   - ✓ Խմբային դասերին և սոցիալական փոխազդեցություններին երեխաների

մասնակցության խթանում՝ սոցիալ-հուզական հմտությունների բարելավում:

4. **Հարմարեցված ուսումնական նյութեր**
   - ✓ Պոլիսենսոր (բազմազգայական) ուսուցման մեթոդների կիրառում տեսողական, լսողական և շոշափելի հարմարեցումներով:
5. **Ապահով և աջակցող միջավայր**
   - ✓ Հոգեբանական անվտանգ միջավայրի ապահովում (որտեղ երեխաները կարող են անցկացնել իրենց առօրյան առանց սթրեսի):
   - ✓ Սիրալիր և խրախուսող մանկավարժական մոտեցում:

Այսպիսի միջավայրի ստեղծումը և ապահովումը կրթության առանձնահատուկ պայմանների 3-րդ և 4-րդ աստիճանի մանկավարժահոգեբանական աջակցության կարիք ունեցող երեխաների համար նպաստում է նրանց լիարժեք մասնակցությանը կրթական գործընթացին՝ զարգացնելով նրանց կարողություններն ու բարելավելով կյանքի որակը:

Կրթական միջավայրը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար կոչված է ապահովելու.

- **ֆիզիկական զարգացում՝** շարժողական կարողությունների խթանում ֆիզիոթերապիայի և տարբեր գործողությունների միջոցով,
- **սոցիալ-հուզական զարգացում՝** երեխաների հուզական կայունության ձևավորում խմբային խաղերի և սոցիալական փոխազդեցությունների միջոցով,
- **հաղորդակցության զարգացում՝** լոգոպեդական աջակցության ապահովում և այլընտրանքային կոմունիկացիոն մեթոդների կիրառություն,
- **կենցաղային հմտությունների զարգացում՝** ինքնասպասարկման և առօրյա կյանքում կիրառվող գործնական հմտությունների ուսուցում,
- **ճանաչողական զարգացում՝** սովորողների ուշադրության, հիշողության և տրամաբանության խթանում տարբեր վարժությունների և խաղերի միջոցով (Mitchell, 2020):

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Կահույքի խելամիտ դասավորություն

Սենյակի կահավորումը պետք է լինի այնպիսին, որ ապահովի ազատ և անվտանգ շարժման հնարավորություն բոլոր սովորողների համար: Դա նշանակում է, որ սեղանները և աթոռները պետք է տեղադրվեն այնպես, որ սովորողները կարողանան հեշտությամբ տեղաշարժվել դասարանում: Օրինակ, սեղանները կարելի է դասավորել կղզյակներով կամ շրջանակով: Այս ձևերը խթանում են սովորողների միջև համագործակցությունը և հեշտացնում շարժունակությունը:

Կարգավորելի կահույքի առկայություն

Ցանկալի է ունենալ կարգավորելի բարձրությամբ սեղաններ և աթոռներ, որոնք կարող են հարմարեցվել յուրաքանչյուր սովորողի կարիքներին: Սա կարևոր է հատկապես այն սովորողների համար, ովքեր օգտագործում են սայլակներ կամ ունեն ֆիզիկական սահմանափակումներ: Օրինակ՝ կարգավորելի սեղանները թույլ են տալիս սովորողներին աշխատել հարմարավետ դիրքում, ինչը նպաստում է ուշադրության կենտրոնացմանը, դասապրոցեսում ներգրավվածությանը և արդյունավետ ուսուցմանը:

Հասանելիության ապահովում

Թեքահարթակների կամ վերելակների առկայությունը անհրաժեշտ է այն վայրերում, որտեղ կան աստիճաններ կամ բարձրությունների տարբերություններ՝ ապահովելու անարգել միջավայր ինչպես դպրոցի մուտքի մոտ, այնպես էլ դպրոցի ողջ տարածքում: Օրինակ՝ դպրոցի գլխավոր մուտքի մոտ, հարկերի միջև, աստիճանավանդակի հարևանությամբ տեղադրե՛ք թեքահարթակ, որպեսզի սայլակով սովորողները կարողանան առանց խոչընդոտների մուտք գործել դպրոց (Mitchell, 2020):

Մուտքերի և դռների հարմարեցում

Դռների լայնությունը պետք է լինի առնվազն 90 սմ, որպեսզի սայլակները կարողանան անցնել: Դռների վրա կարելի է տեղադրել ավտոմատ բացվող համակարգեր կամ լայն բռնակներ՝ դյուրացնելու համար բացումը և փակումը:

Սանհանգույցների հարմարեցում

Սանհանգույցների հարմարեցումը չափազանց կարևոր է՝ ապահովելու համար բոլոր սովորողների ազատ ելումուտը և դրանցից հնարավորինս ինքնուրույն օգտվելու հնարավորությունը: Սա կարող է ներառել բարձրացված զուգարաններ, բռնակներ, լայն դռներ և կարգավորելի լվացարաններ:

Տրանսպորտի հասանելիություն

Եթե դպրոցը տրամադրում է տրանսպորտային ծառայություններ, ապա պետք է ապահովել, որ տրանսպորտային միջոցները հարմարեցված լինեն տեղաշարժման խնդիրներ և սահմանափակումներ ունեցող սովորողների համար:

Դեպքի նկարագրություն

Մարիամի պատմությունը

Մարիամը 10 տարեկան է, ունի մանկական ուղեղային կաթված և լսողության խանգարում, տեղաշարժվում է անվասայլակի օգնությամբ: Երբ նա սկսեց դպրոց հաճախել, այնտեղ վերադասավորեցին դասարանի կահույքը, որպեսզի Մարիամը

կարողանա ազատ տեղաշարժվել: Տեղադրեցին նաև կարգավորելի սեղան, որը թույլ տվեց նրան հարմարավետ նստել և կարողանալ մասնակցել դասերին: Մարիամը այժմ իրեն ներառված է զգում և ակտիվ մասնակցում է դասարանային կյանքին:

ԱՈՒՊ-ում ներառվեց վիզուալ նյութերի պարտադիր կիրառություն՝ ուսուցման գործընթացում ավելի շատ պատկերների և տեսողական գործիքների օգտագործում՝ կրթական նյութը ավելի հեշտ և ընկալելի դարձնելու համար:

Դասընկերների հետ առանձին աշխատանքների արդյունքում վերջիններս սովորեցին լինել աջակցող և համագործակցել Մարիամի հետ՝ նպաստելով նրա սոցիալական ներառմանը: Մարիամի համար հասանելի ձևաչափերով խաղային և խմբային առաջադրանքներ մշակվեցին:

Այսպիսով, դպրոցական ֆիզիկական միջավայրի նշանակությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար չափազանց կարևոր է, քանի որ այն անմիջականորեն ազդում է նրանց ինքնուրույնության, կրթության հասանելիության, սոցիալական ներառման և զարգացման հնարավորությունների վրա: Համապատասխան հարմարեցումներով ֆիզիկական միջավայրը կարող է խթանել այս երեխաների՝ ներառական կրթության համատեքստում ուսումնառության գործընթացին հնարավորինս լիարժեք մասնակցությանը և ներգրավմանը:

Ստորև ներկայացվող առաջադրանքները և դրանց համապատասխան լուծումների որոնումները կօգնեն պատասխաններ գտնել և ապահովել հնարավորինս արդյունավետ կրթական միջավայր կրթության առանձնահատուկ պայմանների 3-րդ և 4-րդ աստիճանի մանկավարժահոգեբանական աջակցության կարիք ունեցող երեխաների համար:

Առաջադրանքներ

Առաջադրանք 1: Վերլուծե՛ք ձեր դպրոցի շենքը և կազմե՛ք առաջարկությունների ցուցակ՝ ինչպես կարելի է պայմաններն ավելի մատչելի դարձնել ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների համար:

Առաջադրանք 2: Դասարանի կահույքը վերադասավորե՛ք այնպես, որ ապահովվի հասանելիություն սայլակ օգտագործող սովորողի համար, ով ունի նաև լսողության սահմանափակում: Նկարագրե՛ք ձեռնարկված քայլերի հաջորդականությունը:

Առաջադրանք 3: Մշակե՛ք դասի պլան, որը ներառում է վիզուալ նյութերի և հաղորդակցման այլընտրանքային միջոցների օգտագործում հաղորդակցման խանգարումներ ունեցող աշակերտների համար:

Առաջադրանք 4: Մշակե՛ք սոցիալական հմտությունների զարգացման ծրագիր ձեր դասարանի համար, ինչը կնպաստի բոլոր աշակերտների ներգրավմանը:

ԶԳԱՅԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ



Զգայական ճիշտ միջավայրը կարևոր է բոլոր սովորողների համար, սակայն այն առանձնահատուկ նշանակություն ունի ծանր և բազմակի խանգարումներ ունեցող սովորողների համար, ովքեր ունեն զգայական ինտեգրման կամ, այլ կերպ ասած, զգայարանների միջոցով ստացված տեղեկատվության վերամշակման խանգարումներ: Այս սովորողները դժվարանում են ներգրավվել ուսումնական գործընթացում կամ առօրյա գործողություններում զգայական ծանրաբեռնվածության պատճառով, ինչն էլ խանգարում և խաթարում է նրանց ուսուցումը, ինքնուրույնությունը և բարեկեցությունը Case-Smith & O'Brien, 2014)**:**

Զգայական միջավայրն ազդում է երեխաների հուզական վիճակի, սոցիալական փոխազդեցության, ուշադրության կենտրոնացման և սովորելու արդյունավետության վրա: Զգայական միջավայրի ճիշտ ձևավորումը նպաստում է նրանց ինքնավստահության, ինքնուրույնության, սոցիալական ներառման և կրթական առաջադիմության խթանմանը:

Զգայական միջավայրի հիմնական բաղադրիչներն են.

1. **Հանգիստ և անվտանգ միջավայրը.**
   - ✓ ապահով տարածք, որտեղ երեխաները չեն առնչվում սթրեսային կամ աղմկոտ ազդակների,
   - ✓ կանխատեսելի միջավայր, որը հնարավորինս նվազեցնում է երեխայի անհանգստությունը:

2. **Զգայական խթանների հարմարեցումը.**
   - ✓ հարմարեցված լուսավորություն լուսազգայունություն ունեցող երեխաների համար,
   - ✓ հաճելի հնչյունների և երաժշտության կիրառում առօրյա գործողություններում,
   - ✓ ցանկալի հոտերի առկայություն (հոտավետ բարձիկներ, սիրելի օծանելիք և այլն),
   - ✓ շոշափելիքի խթանում:
3. **Հուզական աջակցությունը.**
   - ✓ սիրալիր և աջակցող մոտեցում երեխային նրա վստահության զարգացման համար,
   - ✓ հանգստի սենյակների կամ անկյունների առկայություն, որտեղ երեխաները կարող են հանգստանալ, երբ հոգնածություն են զգում կամ սթրեսային վիճակում են:
4. **Գույնի և դիզայնի ազդեցությունը.**
   - ✓ դասասենյակի գունային ձևավորում՝ օգտագործելով հանգստացնող գույներ, ինչպիսիք են, օրինակ, կապույտն ու կանաչը,
   - ✓ խուսափում վառ և հակադիր գույներից, որոնք կարող են շեղել երեխաների ուշադրությանը կամ առաջացնել անհանգստություն:
5. **Հատուկ գործիքներն ու տեխնոլոգիաները.**
   - ✓ զգայական (սենսորային) սենյակների առկայություն լույսի, ձայնի, շոշափելիքի և հոտառության խթանների համար,
   - ✓ հաղորդակցման (կոմունիկացիոն) սարքեր, որոնք օգնում են երեխաներին արտահայտվել, ցույց տալ իրենց կարիքներն ու զգացմունքները:

Զգայական միջավայրի կազմակերպման նպատակներից են.

- **անհանգստության նվազեցումը**, որը օգնում է երեխային նվազեցնել կամ

հաղթահարել սթրեսն ու հուզական լարվածությունը,

- **ուշադրության կենտրոնացումը** զգայական խթանների հարմարեցման միջոցով,
- **սոցիալական ներառումը**, որը հնարավորություն է տալիս ստեղծել միջավայր, որտեղ երեխաները կարող են հաղորդակցվել և համագործակցել իրենց հասակակիցների հետ,
- **զգայական հմտությունների զարգացումը** (Case-Smith&O'Brien, 2014)**:**

Զգայական միջավայրի հարմարեցման համար կարևոր նշանակություն ունի զգայական/սենսորային սենյակների ստեղծումը: Այս սենյակները հատուկ տարածքներ են, որոնք ներառում են մեղմ լուսավորություն, հանդարտ երաժշտություն կամ նուրբ հնչյուններ, տարբեր շոշափելի հարմարանքներ և այլն: Միևնույն ժամանակ կարևոր է ուշադրություն դարձնել երեխային առաջադրվող գործունեության փոփոխականությանը՝ առաջարկելով նրան կարճաժամկետ և բազմազան առաջադրանքներ՝ երեխայի ուշադրությունը չծանրաբեռնելու համար:

Զգայական միջավայրը պետք է լինի դինամիկ, ունենա հնարավորություն փոփոխվելու և փոփոխելու միջավայրի տարրերը՝ յուրաքանչյուր երեխայի հատուկ կարիքներին համապատասխան: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընտանիքի ներգրավումը՝ աշխատանքը և համագործակցությունը ծնողների հետ՝ զգայական միջավայրի շարունակականությունը ապահովելու նաև տնային պայմաններում:

Կրթական գործընթացը կազմակերպելիս կարևոր է ուշադրություն դարձնել երեխաների զգայական միջավայրին, քանի որ վերջինս պատասխանատու է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի հուզական կայունության, ուսուցման արդյունավետության, սոցիալական փոխազդեցության, զարգացման հնարավորությունների ընդլայնման համար:

Հուզական կայունություն	Երեխաներն իրենց զգում են անվտանգ և վստահելի միջավայրում, ինչը նվազեցնում է անհանգստությունն ու վախերը:
Ուսուցման արդյունավետություն	Հարմարեցված միջավայրը բարելավում է երեխայի կենտրոնացումը և նյութի ընկալումը:
Սոցիալական փոխազդեցություն	Նման միջավայրը խթանում է երեխաների՝ իրենց հասակակիցների հետ ավելի արդյունավետ հաղորդակցումը:
Զարգացման հնարավորությունների ընդլայնում	Զգայական հարմարեցումները խթանում են երեխայի ֆիզիկական, սոցիալական և հուզական հմտությունները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԶԳԱՅԱԿԱՆ ՃԻՇՏ ՄԻՋԱՎԱՅՐ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՆԳՍՏԻ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ

- Ստեղծե՛ք հանգստի անկյուններ փափուկ նստարաններով կամ բարձերով և թո՛ւյլ տվեք երեխաներին հանգստանալ, երբ նրանք դրա կարիքն ունեն՝ անկախ դասապրոցեսի ընթացքից:
- Սահմանե՛ք անձնական տարածք յուրաքանչյուր երեխայի համար և սովորեցրե՛ք երեխաներին հարգել յուրաքանչյուր սովորողի անձնական տարածքը:

ՏԵՍՈՂԱԿԱՆ ԽԱՌՆԱՇՓՈԹԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

- **Կազմակերպված միջավայր**: Պահպանե՛ք դասարանը մաքուր և կազմակերպված: Սահմանե՛ք հստակ վայրեր յուրաքանչյուր նյութի համար:
- **Չեզոք գույներ**: Օգտագործե՛ք հանգիստ և չեզոք գույներ պատերի և կահույքի համար:
- **Սահմանափակ դեկորացիաներ**: Խուսափե՛ք ավելորդ պաստառներից և դեկորացիաներից, որոնք կարող են շեղել սովորողների ուշադրությունը:

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

- **Բնական լույսի օգտագործում**: Բացե՛ք վարագույրները և թո՛ւյլ տվեք, որ դասարանը լուսավորվի բնական լույսով: Այն ավելի հաճելի է աչքերի համար և օգնում է նվազեցնել երեխայի աչքերի հոգնածությունը:
- **Կարգավորելի լույսեր**: Օգտագործե՛ք լամպեր, որոնց լուսավորությունը կարելի է կարգավորել: Սա թույլ կտա լուսավորությունը հարմարեցնել սովորողների կարիքներին:

- **Մեղմ փայլով լույսեր**: Խուսափե՛ք պայծառ ու վառ լույսերից և օգտագործե՛ք մեղմ փայլով լամպեր՝ անցանկալի լուսային խթանները նվազեցնելու համար:

ՀՈՏԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

- **Օդափոխում**: Համոզվե՛ք, որ դասարանը լավ օդափոխվում է՝ չեզոքացնելու համար անցանկալի հոտերը:
- **Հոտերի խուսափում**: Խուսափե՛ք ուժեղ կամ սուր հոտ ունեցող նյութերի օգտագործումից, ինչպես օրինակ՝ որոշ ֆլոմաստերներ, ներկեր կամ մաքրող նյութեր:

ԶԱՅՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

- **Ձայնամփոփ նյութեր**: Տեղադրե՛ք գորգեր, վարագույրներ, փափուկ կահույք և ձայնամփոփող պանելներ պատերին և առաստաղին՝ նվազեցնելու ձայնի արձագանքը:
- **Ֆոնային աղմուկի նվազեցում**: Խուսափե՛ք ֆոնային աղմուկներից, ինչպիսին է, օրինակ օդափոխիչների բարձր ձայնը: Եթե հնարավոր է, օգտագործե՛ք անձայն օդափոխության համակարգեր:
- **Անձնական ականջակալներ**: Թո՛ւյլ տվեք սովորողներին օգտագործել ականջակալներ կամ ականջախցիկներ՝ աղմուկից պաշտպանվելու համար:

Այսպիսով, զգայական միջավայրը կարևոր գործոն է ծանր և բարդ խանգարումներով երեխաների ուսուցման գործընթացում: Այն պետք է լինի ճկուն, հարմարեցված և երեխայի կարիքներին համահունչ, որպեսզի ապահովի հուզական կայունություն, ուսուցման արդյունավետություն և

սոցիալական ներառում: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել միջավայրի անհատականացմանը՝ յուրաքանչյուր երեխայի առանձնահատկություններին համապատասխան:

Դեպքի նկարագրություն

Կարենի պատմությունը

Կարենը 8 տարեկան է, նա ունի աուտիզմ և զգայական ինտեգրման խանգարումներ: Նա հաճախ էր անհանգստանում դասարանի բարձր աղմուկից և պայծառ լույսերից: Մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող ողջ թիմը վերանայեց դասարանի միջավայրը՝ տեղադրելով կարգավորելի լույսեր և ձայնամփոփ վարագույրներ: Ցանկության դեպքում Կարենին տրամադրվում էին ականջակալներ: Դասարանում ստեղծվեց նաև հանգստի անկյուն, որտեղ Կարենը կարող էր հանգստանալ: Այս փոփոխությունները օգնեցին Կարենին ավելի լավ կենտրոնանալ և մասնակցել դասերին:

Ներկայացվող առաջադրանքները և դրանց համապատասխան լուծումները կօգնեն պատասխաններ գտնել և ապահովել հնարավորինս արդյունավետ կրթական միջավայր կրթության առանձնահատուկ պայմանների 3-րդ և 4-րդ աստիճանի մանկավարժահոգեբանական աջակցության կարիք ունեցող այն երեխաների համար, ովքեր զգայական ինտեգրման խնդիրներ ունեն:

Առաջադրանքներ

Առաջադրանք 1: Նախագծե՛ք դասարան աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող սովորողների համար, ովքեր ունեն զգայական ինտեգրման խանգարում, այն է՝ գերզգայունություն հոտերի և բարձր ձայների նկատմամբ:

Առաջադրանք 2: Մշակե՛ք դասի պլան, որը ներառում է վիզուալ նյութերի և հաղորդակցման այլընտրանքային միջոցների օգտագործում հաղորդակցման խանգարումներ ունեցող աշակերտների համար:

Առաջադրանք 3: Մշակե՛ք զգայական այնպիսի միջավայրի օրինակ, որը կապահովի ձայնային, լուսային, շոշափելիքի զարգացման և կարգավորման գործոններ: Նշե՛ք, թե կոնկրետ որ երեխաների հետ արդյունավետ կլինի աշխատանքը այդ միջավայրում:

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Ծանր և բազմակի խանգարումներ ունեցող երեխաների վարքագծի կառավարման համար անհրաժեշտ են գործնական և ինտեգրված լուծումներ, որոնք հաշվի են առնում երեխաների ֆիզիկական, ճանաչողական, հուզական և սոցիալական առանձնահատկությունները: Կարելի է առանձնացնել մի քանի հիմնական գործնական լուծումներ, որոնք կարող են օգնել այս ոլորտում (Bambara & Kern, 2021; Farrell & Ainscow, 2019): Վերջիններս համառոտ ներկայացված են ստորև:

Մեթոդ կամ մոտեցում	Խնդիր	Լուծում
Դրական վարքագծի խրախուսում (Positive Behavior Support, PBS) (Horner, Sugai & Anderson, 2020).	Երեխաների մոտ առկա վարքագծային դրսևորումների կառավարման դժվարությունների կանխարգելում և նվազեցում:	• Հստակ սահմանել երեխայի վարքագծային նպատակները: • Օգտագործել դրական խրախուսման մեթոդներ (օրինակ՝ գովեստ, փոքր պարգևներ): • Նպաստել ցանկալի վարքագծի կայացմանը աստիճանական առաջընթացի միջոցով:
Կայուն և հստակ ռեժիմի հաստատում	Երեխաները հաճախ դժվարանում են հարմարվել նոր, իրենց համար անկանխատեսելի միջավայրում:	• Կազմել և հետևել հստակ սահմանված օրակարգի: • Օրակարգը ներկայացնել պատկերներով, գրաֆիկներով կամ հաղորդակցման այլ միջոցներով: • Փոփոխությունների դեպքում նախապես զգուշացնել երեխային:

Վիզուալ աջակցությունների և պատկերային համակարգերի կիրառում	Վարքագծային դժվարություններ, որոնք կարող են պայմանավորված լինել հաղորդակցման դժվարություններով:	• Օգտագործել պատկերային քարտեր: • Կիրառել գրաֆիկական պատկերներ՝ գործնական քայլերի բացատրության համար: • Ներառել ժեստեր կամ հաղորդակցման սարքավորումներ:
Հուզական կարգավորման ռազմավարություններ	Երեխաները հաճախ չեն կարողանում արտահայտել իրենց հույզերը և հուզական վիճակը:	• Ներկայացնել հույզերի պատկերներով քարտեր՝ տարբեր հույզերի ճանաչման համար: • Ուսուցանել ինքնակառավարման մեթոդներ (օրինակ՝ խորը շնչառություն, հանգստացնող գործողություններ): • Ստեղծել հանգստի անկյուն՝ երեխայի համար մատչելի և անվտանգ տարածք:
Հստակ և պարզ ցուցումների կիրառում	Երեխաները դժվարանում են հասկանալ բարդ կամ երկար ցուցումները:	• Տրամադրել պարզ, կարճ և հստակ ցուցումներ: • Օգտագործել քայլ առ քայլ ցուցումներ և հստակ ցուցադրել գործողությունները:
Վարքագծային դժվարությունների պատճառների բացահայտում	Վարքագծային դժվարությունները հաճախ ունենում են ֆիզիկական, հուզական կամ միջավայրային պատճառներ:	• Կատարել վերլուծություն վարքագծային սխեմաների բացահայտման համար (օրինակ՝ ABC մոտեցում՝ Antecedent, Behavior, Consequence):

		• Փոփոխել միջավայրը կամ դասարանական պայմանները՝ խնդիրը մեղմելու համար:
Համապատասխան միջավայրի ձևավորում	Չհարմարեցված միջավայրերը կարող են առաջացնել վարքագծային խնդիրներ:	• Ստեղծել միջավայր՝ նվազագույն շեղող գործոններով: • Օգտագործել օրթոպեդիկ կամ զգայական խթանող գործիքներ՝ հարմարավետությունն ապահովելու համար:
Զգայական կարիքների բավարարման լուծումներ	Վարքագծի որոշ դրսևորումներ կարող են պայմանավորված լինել զգայական խնդիրներով:	• Ներառել զգայական խաղեր կամ պարագաներ (օրինակ՝ զգայական գնդակներ, ծանր վերմակներ): • Ապահովել սենյակների լուսային, ձայնային և ջերմաստիճանի հարմարեցումներ:
Վարքագծի կառավարման անհատական ծրագիր (Individualized Behavior Plan, IBP)	Յուրաքանչյուր երեխայի կարիքները և վարքային դրսևորումները տարբեր են:	• Հավաքել տվյալներ երեխայի վարքագծի մասին: • Ուսուցչի, ծնողների և մասնագետների հետ համատեղ մշակել ԱՈՒՊ, որտեղ հստակ անդրադարձ է կատարվում երեխայի վարքին:

Համագործակցություն ընտանիքի և մասնագետների հետ	Վարքագծի կառավարման գործընթացը պահանջում է համընդհանուր մոտեցում:	• Կազմակերպել պարբերական հանդիպումներ ծնողների և մասնագետների հետ: • Հավասարաչափ օգտագործել ուսումնական և տնային միջավայրերում հասանելի գործիքները:
Խուսափողական վարքագծի նվազեցում	Երեխան դասը պարբերաբար խանգարում է ձայնային բարձր ազդանշաններով:	• Վերլուծել պատճառները՝ հասկանալու, թե որ իրավիճակներն են առաջ բերում այս վարքագիծը: • Տվյալ վարքագծի փոխարեն առաջարկել այլընտրանքային մեթոդ, օրինակ՝ կոճակի սեղմում՝ ուշադրություն գրավելու համար: • Խրախուսել երեխային նոր վարքագծի համար (գովեստ կամ պարգև):

Այս մոտեցումներն ու գործնական լուծումները կօգնեն արդյունավետորեն կառավարել ծանր և բազմակի խանգարումներ ունեցող երեխաների վարքագծային դժվարությունները՝ խթանելով նրանց ներառումը ուսուցման գործընթացում և սոցիալական միջավայրում:

Դեպքի նկարագրություն

Արայի պատմությունը

Արան չուներ խոսք. առկա չէր բժշկական հստակ ախտորոշում: Նա հաճախ խախտում էր դպրոցական կանոնները և խանգարում դասը. ընթացքում տեղից վեր էր կենում, անվերահսկելի շրջում դասարանում, նետում ուսումնական պարագաները (գրիչներ, գրքեր) կամ դրանց հետ խաղում բարձր ձայներ արձակելով: Հաշվի առնելով Արայի առանձնահատկությունները և ուժեղ կողմերը՝ ուսուցիչը դասարանում իրականացրեց հետևյալ գործողությունները:

Դիտարկման միջոցով փորձեց հասկանալ՝ ինչն է երեխայի ֆիզիկական ակտիվության պատճառը (օրինակ՝ ուշադրության պակաս, սթրես, անհանգստություն կամ ձանձրույթ):

Ստեղծեց փոքր պարգևների համակարգ ճիշտ վարքի համար (օրինակ՝ խաղալիք, գունավոր աստղեր կամ հատուկ ուշադրություն), և յուրաքանչյուր անգամ, երբ Արան նստած լսում էր դասը, գովում էր նրան՝ «Շատ ապրես, հրաշալի է, որ հիմա նստած ես ու լսում ես»:

Երեխային առաջարկեց ֆիզիկական գործողությունների այլընտրանք՝ առանց դասը խանգարելու. օրինակ՝ «Եթե ցանկանում ես շարժվել, կարող ես 5 րոպե կանգնել սեղանի մոտ կամ թեթև շարժվել դասասենյակի առանձին հատվածում»:

Դասարանում առանձնացրեց տարածք, որտեղ երեխան կարող է հանգստանալ, եթե զգում է, որ չի կարողանում վերահսկել իրեն:

Վարքագծի կառավարումն ու աջակցությունը ուսումնական միջավայրում նպաստում են ավելի առողջ կրթական գործընթացին՝ ապահովելով սովորողների ներգրավվածությունն ու անվտանգությունը (Crone & Horner, 2015): Նշված մոտեցումների և գործնական լուծումների կիրառումը կարող է ուսուցիչներին օգնել ավելի արդյունավետ կառավարել դասարանն ու խթանել սովորողների զարգացմանը:

Կրթական հաստատություններում վարքագծի կառավարման և աջակցության միջոցների համատեղումը ապահովում է ուսուցման որակը: Ուսուցիչները, ուսուցչի օգնականները, աջակցող թիմի մասնագետներն ու ծնողները, կիրառելով այս մեթոդները, կարող են ստեղծել ավելի լավ ուսումնական միջավայր, որտեղ սովորողները կարող են զարգանալ թե՛ ակադեմիական գիտելիքների, թե՛ առօրյա հմտությունների յուրացման և թե՛ սոցիալականացման առումով:

Առաջադրանքներ

Առաջադրանք 1: Վերլուծե՛լ ուսումնական գործընթացում երեխայի վարքագիծը՝ դիտարկելով նրա վարքը 2 դասաժամի ընթացքում: Օգտագործել ABC մեթոդը (Antecedent, Behavior, Consequence).

Antecedent (նախորդող իրավիճակներ): Ի՞նչ է տեղի ունենում մինչ տվյալ վարքագծի դրսևորումը:

Behavior (վարքագիծ): Ի՞նչ է անում երեխան:

Consequence (հետևանքներ): Ինչպե՞ս են արձագանքում ուսուցիչը կամ դասընկերները:

Վերլուծության արդյունքում կազմել նկարագիր երեխայի վարքագծի մոդելի վերաբերյալ:

Առաջադրանք 2: Ընտրե՛լ երեխայի երկու հիմնական վարքագիծ, որոնք խանգարում են դասի ընթացքին: Նշել հնարավոր պատճառները (օրինակ՝ սթրես, հաղորդակցման դժվարություն, ձանձրույթ, ֆիզիկական անհարմարություն): Նշել վարքի և միջավայրի միջև պատճառահետևանքային կապերը:

Առաջադրանք 3: Սահմանե՛լ SMART նպատակ բարդ և բազմակի խնդիրներ ունեցող վարքային խնդիրներով երեխայի համար:

ԴԵՊՔԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Ուսումնական միջավայրում սովորողների հատուկ կարիքների ապահովումը կարևոր է նրանց լիարժեք ուսուցման և զարգացման համար: Յուրաքանչյուր երեխա ունի իր առանձնահատուկ կարիքները, և ուսուցիչները, ուսուցչի օգնականները, ինչպես նաև աջակցող թիմի մասնագետներն ու ծնողները պետք է պատրաստ լինեն ընդունել դրանք և հնարավորինս աջակցել այդ կարիքները հոգալուն: Այստեղ կներկայացվեն դեպքերի ուսումնասիրություններ և գործնական լուծումներ՝ հստակ պատկերացում ապահովելով այն մասին, թե ինչպես կարելի է լուծել տարբեր խնդիրներ, որոնց հանդիպում են կրթության առանձնահատուկ պայմանների 3-րդ և 4-րդ աստիճանի մանկավարժահոգեբանական աջակցության կարիք ունեցող երեխաները և նրանց հետ աշխատող անձնակազմը ուսումնական գործընթացում:

Դեպք 1

Էմման 10 տարեկան է, ունի մանկական ուղեղային կաթված, որն առաջացնում է շարժունակության սահմանափակումներ և մտավոր զարգացման խանգարում: Նա տեղաշարժվում է անվասայլակով, ունի սահմանափակ խոսքային կարողություններ: Երեխան շատ բարի է, էությամբ ուրախ և սիրում է շփվել ընկերների հետ:

Առաջ եկող խնդիրներ

- ✓ Դասարանում կիրառվող նյութերի դժվար հասանելիություն:
- ✓ Երեխայի հաղորդակցման և շփման դժվարություն:
- ✓ Խմբային աշխատանքներին մասնակցության դժվարություն:

Լուծումներ

Աջակցող տեխնոլոգիայի տրամադրում: Օգտագործել պլանշետներ՝ մասնագիտացված հավելվածներով, որոնք թույլ են տալիս Էմմային արտահայտել իր կարիքները: Այս հավելվածները ներառում են պատկերներով համակարգեր և ձայնային ելքեր: Կարելի է ներբեռնել առավել հաճախ կիրառվող պատկերները, եթե հավելվածները տարբեր պատճառներով հնարավոր կամ մատչելի չեն:

Հարմարեցված նյութերի տրամադրում: Տրամադրել մեծ տառատեսակով և պարզեցված բովանդակությամբ ուսուցողական նյութեր, որոնք կօգնեն Էմմային կենտրոնանալ և ավելի հեշտ հասանելիություն ունենալ ուսումնական նյութերին և ներգրավվել դասընթացին:

Ընկերների աջակցություն: Կարող է դասընկերներից մեկը տվյալ դասին լինել Էմմայի օգնականը, ով կաջակցի նրան դասերի ընթացքում և խմբային աշխատանքի ժամանակ: Ընկերները կարող են նպաստել ծանր և բազմակի խանգարումներ ունեցող սովորողների ներառմանը խմբային աշխատանքներում և դասարանական սոցիալական միջավայրում: Համադասարանցիների աջակցությունը կարող է բարձրացնել երեխայի մոտիվացիան, ինքնավստահությունն ու ուսման հանդեպ հետաքրքրությունը: Միևնույն ժամանակ, նման իրավիճակները դասընկերների մոտ զարգացնում են համբերատարություն, կարեկցանք և համագործակցային հմտություններ:

Դեպք 2

Լևոնը 8 տարեկան է, ունի աուտիզմ և վարքային խանգարումներ: Նա դրսևորում է կրկնվող վարքագիծ, ունի սոցիալական փոխգործակցության խնդիրներ: Աչքի կոնտակտը բացակայում է, ունի զգայական խնդիրներ, դրսևորում է ագրեսիվ վարքագիծ և հրաժարվում հաղորդակցվել:



Խնդիրներ

- ✓ Զգայունություն առաջացնող գերբեռնվածություն:
- ✓ Սոցիալական հուշումների ընկալման դժվարություններ:
- ✓ Փոփոխություններին դիմակայելու դժվարություն:

Լուծումներ

Զգայական ընդմիջումներ: Կազմակերպել հանգստի անկյուն, որտեղ ներառված կլինեն «հանգստացնող գործիքներ», ինչպես, օրինակ՝ փափուկ նստատեղեր, ծանրացված վերմակ, վրան և այլն: Այս միջոցները կօգնեն նվազեցնել երեխայի զգայական գերբեռնվածությունը:

Սոցիալական պատմություններ: Ստեղծել հատուկ պատմություններ, որոնք ներկայացնում են սոցիալական իրավիճակները և ուսուցանում Լևոնին, թե ինչպես արձագանքել տարբեր իրավիճակներում: Սոցիալական պատմությունները կարող են լինել պարզ սցենարներ տարբեր դասարանային իրավիճակների վերաբերյալ, ինչպիսիք են, օրինակ՝ «Ինչ անել դասամիջոցին» կամ «Ինչպես մասնակցել խմբային խաղերին»: Այս մոտեցումը կնպաստի Լևոնի սոցիալական հմտությունների զարգացմանը: Կարևոր է այս

ամենը իրականացնել այն ժամանակ, երբ Լևոնը ցանկանում և ներգրավվում է:

Սոցիալական փոխգործակցության խթանում: Համատեղ աշխատանք իրականացնել լոգոպեդի և/կամ հոգեբանի հետ՝ զարգացնելու Լևոնի սոցիալական փոխգործակցության հմտությունները: Խաղային միջավայրում կազմակերպել խմբային գործողություններ՝ նվազեցնելու Լևոնի սոցիալական վախերը:

Աչքի կոնտակտ: Երեխայի մոտ աչքի կոնտակտը զարգացնելու համար կարելի է ընտրել գունավոր առարկաներ կամ Լևոնի համար հետաքրքրություն ներկայացնող խաղալիքներ: Կարճ ժամանակահատվածում փորձել վարժություններ՝ երեխայի ուշադրությունը կենտրոնացնելու համար, օրինակ՝ խաղալիքը պահել աչքերի մոտ կամ այդ մակարդակում:

Դեպք 3

Նոնան 12 տարեկան է, ունի մկանային դիստրոֆիա և Դաունի համախտանիշ, որը ազդում է նրա շարժունակության և տոկունության վրա: Երեխան շատ շուտ հոգնում է և չի կարողանում պահպանել ուշադրությունը:

Խնդիրներ

- ✓ Հոգնածություն օրվա ընթացքում:
- ✓ Գրելու դժվարություններ:
- ✓ Դպրոցի տարածքում տեղաշարժման դժվարություններ:

Լուծումներ

Էներգիայի խնայողություն: Համեմատաբար ծանրաբեռնված դասերը կազմակերպել

առավոտյան ժամերին, երբ Նոնան առավելապես առույգ է և պատրաստ է ներգրավվել դասապրոցեսում ու սովորել:

Ձայնային մուտքի ծրագրային ապահովում: Թույլ տալ Նոնային կատարել առաջադրանքները բանավոր՝ օգտագործելով տարբեր տեխնոլոգիաներ, ձայնային մուտքի ծրագրեր, որոնք կարող են գրի առնել երեխայի ասածները:

Դպրոցական միջավայրի մատչելիություն և հասանելիություն: Համոզվել, որ դպրոցի բոլոր տարածքները հարմարեցված են սայլակով տեղաշարժվելու համար, ինչը կօգնի Նոնային ազատորեն տեղաշարժվել, և նա ստիպված չի լինի դպրոցական օրվա ողջ ընթացքում մնալ նույն դասասենյակում:

Ուսումնասիրված դեպքերի օրինակները ցույց են տալիս, որ ուսուցիչների, ուսուցչի օգնականների, աջակցող թիմի մասնագետների և ծնողների կողմից կիրառվող ճիշտ ռազմավարությունները ինչպես դպրոցում, այնպես էլ տանը կարող են զգալիորեն բարելավել սովորողների ուսումնական փորձը և ներգրավվածությունը: Կրթության առանձնահատուկ պայմանների 3-րդ և 4-րդ աստիճանի մանկավարժահոգեբանական աջակցության կարիք ունեցող երեխաների աջակցության համակարգված մոտեցումը պահանջում է համագործակցություն, տեխնոլոգիական աջակցություն և միջավայրի համապատասխան հարմարեցումներ:

Դեպք 4

Արարատը 12 տարեկան է, ունի աուտիզմի սպեկտրի և ինտելեկտուալ խանգարում: Նա տեղաշարժման դժվարություններ չունի, բայց ունի գերզգայունություն և շփման որոշակի խնդիրներ: Արարատը շատ հետաքրքրված է գեղարվեստով և պարբերաբար նկարում է հետաքրքիր պատկերներ:

Առաջ եկող խնդիրներ

- ✓ Դասարանում բարձր ձայների և լույսերի նկատմամբ գերզգայունություն:
- ✓ Դժվարություն խմբային աշխատանքներին մասնակցելու հարցում:
- ✓ Նոր առաջադրանքներին հարմարվելու դժվարություն:

Լուծումներ

Զգայական աջակցություն տրամադրել: Արարատին առաջարկել ականջակալներ դասարանում ձայների ներգործությունը նվազեցման համար և կազմակերպել դասարանը այնպես, որ լույսերը մեղմ լինեն՝ գերզգայունությունը նվազեցնելու նպատակով:

Հարմարեցված միջավայր ստեղծել: Դասարանում ստեղծել հանգստի գոտի Արարատի համար, որտեղ նա կարող է հանգստանալ և կենտրոնանալ այն պահերին, երբ առավել նյարդայնացած է կամ լարվածություն է զգում: Շատ արդյունավետ է տեսողական գրաֆիկների և օրակարգերի կիրառումը՝ դասաժամերի ընթացքը հնարավորինս պատկերավոր և կանխատեսելի դարձնելու համար:

Հարմարեցված ուսումնական նյութեր: Աջակցող վարժանքներ տրամադրել, որոնք կօգնեն Արարատին մասնակցել խմբային առաջադրանքներին: Օրինակ՝ խմբային առաջադրանքները բաժանել պարզ փուլերի և նրան տրամադրել առաջադրանքներ, որոնք համապատասխանում են նրա հետաքրքրություններին, օրինակ՝ նկարել կամ գունավորել: Այս և նմանատիպ լուծումները թույլ կտան Արարատին առավել հեշտ ներգրավվել ուսումնական գործընթացին և իրեն զգալ դասարանի լիարժեք անդամ:

Դեպք 5

Անին 8 տարեկան է, ունի լսողության խանգարում և խոսքի զարգացման դժվարություններ: Նա օգտագործում է լսողական սարք, բայց խոսելու և լսելու հետ կապված դժվարությունները զգալի են: Անին շատ ակտիվ է, սիրում է նկարել և դասընկերների հետ խաղալ:

Առաջ եկող խնդիրներ

- ✓ Ուսումնական նյութերի հասանելիություն լսողական խանգարման պատճառով:
- ✓ Դասարանում հաղորդակցման և տեղեկությունների ընկալման դժվարություն:
- ✓ Խմբային աշխատանքներում և դասարանական խաղերում լիարժեք մասնակցության դժվարություն:

Լուծումներ

Աջակցող տեխնոլոգիաների օգտագործում: Անիին տրամադրել աջակցող տեխնոլոգիաներ, ինչպիսիք են լսողական սարքի հետ համատեղվող հաղորդակցման սարքավորումները: Այս սարքերը կարող են նվազեցնել ձայնային աղմուկը և ապահովել դասախոսի ձայնի հստակ ընկալումը: Օգտագործել նաև տեքստային հաղորդակցման հավելվածներ, որոնք թույլ կտան Անիին ավելի հեշտ հասկանալ ուսուցողական նյութերը:

Տեսողական ուսումնական նյութերի տրամադրում: Օգտագործել տեսողական ներկայացումներ, պատկերագրքեր, գրաֆիկներ և դիագրամներ՝ ուսումնական գործընթացը հասանելի դարձնելու համար: Կարող են կիրառվել նաև տեսանյութեր՝ տեքստային նկարագրություններով:

Հաղորդակցման աջակցություն: Անիին և նրա համադասարանցիներին սովորեցնել պարզ ժեստերի լեզուն կամ օգտագործել պատկերային հաղորդակցման քարտեր՝ հաղորդակցման գործընթացը հեշտացնելու համար: Կարելի է ստեղծել նաև «դասարանի գործընկեր» ծրագիր, որտեղ դասընկերներից մեկը կլինի Անիի օգնականը, և ժամանակ առ ժամանակ փոխել օգնականին:

Խմբային ներգրավվածության խթանում: Խմբային առաջադրանքների ժամանակ Անիին տալ այնպիսի դերեր, որոնք կապված են նրա ուժեղ կողմերի հետ, օրինակ՝ նկարելու կամ կազմակերպչական աշխատանքներ: Սա կնպաստի, որ Անին զգա իրեն թիմի անդամ, ավելի մոտիվացված կլինի և կվստահի սեփական ուժերին ու համադասարանցիներին: Միևնույն ժամանակ այս լուծումները կօգնեն Անիին ավելի հեշտությամբ ներգրավվել ուսումնական գործընթացում, սոցիալական միջավայրում և զարգացնել իր հմտությունները՝ հաղթահարելով լսողության և հաղորդակցման խոչընդոտները:

Դեպք 6

Գոռը 9 տարեկան է, ունի ինտելեկտի խանգարում, ուշադրության պակաս և հիպերակտիվություն (ՈՒՊՀԽ): Նա դժվարությամբ է կենտրոնանում դասերի ժամանակ, հաճախ շեղվում է դասից և ակտիվ շարժվում է դասարանում: Գոռը շատ հետաքրքրված է տեխնոլոգիաներով և սիրում է ստեղծել տեսախաղերի կերպարների դիզայն:

Առաջ եկող խնդիրներ

- ✓ Դասի ժամանակ կենտրոնանալու և առաջադրանքները ավարտելու դժվարություն:
- ✓ Դասարանում առկա միջավայրին հարմարվելու դժվարություն:
- ✓ Խմբային առաջադրանքների ընթացքում համատեղ աշխատանքի կազմակերպման դժվարություն կամ անհնարինություն:

Լուծումներ

Ուշադրության կենտրոնացման աջակցություն: Գոռի համար սահմանել հստակ և մանրամասն առաջադրանքներ՝ դրանք բաժանելով փոքր և կառավարելի փուլերի: Կարելի է

օգտագործել նաև տեսողական ազդանշաններ ժամանակի կառավարման համար, օրինակ՝ ժամացույց կամ տեսողական գրաֆիկներ, որոնք ցույց են տալիս առաջադրանքի մնացած ժամանակը:

Ֆիզիկական ակտիվության խթանում: Դասի ընթացքում Գոռին տրամադրել շարժման հնարավորություն: Օրինակ՝ ժամանակ առ ժամանակ առաջարկել փոքր շարժողական ընդմիջումներ, որոնք կօգնեն նրան ազատվել կուտակված էներգիայից և ավելի լավ կենտրոնանալ:

Տեխնոլոգիաների ներառում: Ուսուցողական նյութերը դարձնել հետաքրքիր և ինտերակտիվ՝ օգտագործելով թվային գործիքներ, ինչպիսիք են ուսուցողական խաղերը կամ անիմացիոն հավելվածները: Գոռի հետաքրքրությունները տեխնոլոգիաների նկատմամբ կարելի է ներառել ուսումնական գործընթացում, օրինակ՝ առաջարկել նախագծեր, որտեղ նա կարող է օգտագործել տեխնոլոգիաների կիրառման իր հմտությունները:

Հանգստի տարածքի ստեղծում: Դասարանում ստեղծել հատուկ հանգստի անկյուն, որտեղ Գոռը կարող է հանգստանալ, եթե զգում է, որ կենտրոնանալը դժվար է: Այս տարածքը կարող է ներառել հարմարավետ նստատեղեր, հանգստացնող տեսողական նյութեր և խաղալիքներ, որոնք կօգնեն նրան վերականգնել ուշադրությունը:

Աջակցություն խմբային աշխատանքներում: Խմբային առաջադրանքների ժամանակ Գոռին տալ այնպիսի հանձնարարություններ, որոնք կհամապատասխանեն նրա հետաքրքրություններին և ուժեղ կողմերին: Այս լուծումները կօգնեն Գոռին ավելի արդյունավետ ներգրավվել դասարանական աշխատանքներում, զարգացնել իր ուժեղ կողմերը և հնարավորինս հաղթահարել ուշադրության և ինքնակարգավորման հետ կապված դժվարությունները:

Դեպք 7

Սարգիսը 10 տարեկան է, ունի մտավոր զարգացման ծանր խանգարում և սովորելու դժվարություններ: Նա չի կարողանում հետևել դասերին, ավարտել առաջադրանքները ժամանակին և մասնակցել խմբային աշխատանքներին: Սարգիսը շատ ընկերասեր է, սիրում է լսել երաժշտություն և զրույցներ կենդանիների մասին:

Առաջ եկող խնդիրներ

- ✓ Ուսումնական նյութերի հասանելիության խնդիր:
- ✓ Դասարանում առաջադրանքների ընկալման և ավարտին հասցնելու դժվարություններ:
- ✓ Խմբային առաջադրանքներում մասնակցության դժվարություն:

Լուծումներ

Հարմարեցված ուսումնական նյութեր: Սարգսին տրամադրել պարզեցված բովանդակությամբ նյութեր, որոնք ներառում են տեսողական բաղադրիչներ, օրինակ՝ նկարներ, գունավոր սահիկներ և սիմվոլներ: Տեքստերը ներկայացնել ձայնագրված՝ հակիրճ և փոքր հատվածներով, որպեսզի նյութն ավելի հասկանալի լինի:

Աջակցող վարժանքների տրամադրում: Սարգսի ուսումնական առաջադրանքները բաժանել փոքր փուլերի և յուրաքանչյուր փուլն ավարտելուց հետո խրախուսել նրան՝ բարձրացնելով մոտիվացիան:

Տեխնոլոգիաների օգտագործում: Օգտագործել ինտերակտիվ ուսուցողական խաղեր և հավելվածներ, որոնք հետաքրքրություն կառաջացնեն Սարգսի մոտ, կապահովեն նրա ներգրավվածությունը և կօգնեն հեշտությամբ սովորել նոր նյութեր: Օրինակ՝ խաղեր

կենդանիների թեմայով, որոնք համատեղում են ուսուցումը և զվարճանքը:

Խմբային ներգրավվածության խթանում: Խմբային առաջադրանքներում Սարգսին հանձնարարել այնպիսի գործողություններ, որոնք համատեղում են նրա հետաքրքրությունները և հմտությունները, օրինակ՝ թիմի համար կենդանիների թեմայով նյութեր հավաքել կամ նկարել (եթե հնարավոր է): Սա կօգնի Սարգսին իրեն կարևոր և վստահ զգալ:

Անհատական աջակցություն: Դասընկերներից մեկին կամ ուսուցչի օգնականին ներգրավել որպես Սարգսի աջակից՝ անհրաժեշտության դեպքում նրան ուղղորդելու և առաջադրանքները կատարելու համար: Նմանատիպ լուծումները կօգնեն Սարգսին հաղթահարել ուսումնական գործընթացում առաջացած դժվարությունները, ակտիվորեն ներգրավվել դասարանում և զարգացնել իր ուժեղ կողմերը՝ իրեն լիարժեք դասարանի անդամ զգալով:

Դեպք 8

Լուսինեն 11 տարեկան է, ունի բազմակի խանգարումներ՝ տեսողության թեթև խանգարում, մանկական ուղեղային կաթված, որն առաջացնում է շարժունակության սահմանափակումներ և զգացմունքային կարգավորման դժվարություններ: Նա հաճախ դժվարանում է կենտրոնանալ երկարատև առաջադրանքների վրա, դժվարություններ ունի նաև համադասարանցիների հետ հարաբերություններում: Լուսինեն շատ հետաքրքրված է երաժշտությամբ և սիրում է նվագել իր սիրելի նվագարանով՝ սինթեզատորով:

Առաջ եկող խնդիրներ

- ✓ Դասարանում տեսողական նյութերի դժվար հասանելիություն:
- ✓ Երկարատև առաջադրանքների վրա կենտրոնանալու դժվարություն:
- ✓ Սոցիալական միջավայրում համադասարանցիների հետ շփման սահմանափակումներ:

Լուծումներ

Հարմարեցված ուսումնական նյութեր: Լուսինեի համար մշակել ուսումնական նյութեր մեծ տառատեսակներով և բարձր հակադրությամբ գույներով: Օրինակ՝ գրատախտակի նյութերը կարող են ներկայացվել էլեկտրոնային ձևաչափով, որը հեշտ է մեծացնել:

Տեխնոլոգիաների օգտագործում: Օգտագործել տեխնոլոգիաներ, օրինակ՝ պլանշետներ կամ լապտոպներ, որոնք հնարավորություն կտան Լուսինեին մոտեցնել նյութերը և կենտրոնանալ վիզուալ պատկերների վրա: Լուսինեի երաժշտական հետաքրքրությունները կարող են օգտագործվել որպես ուսուցման բաղադրիչ, օրինակ՝ ինտերակտիվ երաժշտական խաղերի ներառում դասավանդման ընթացքում:

Շարժունակության աջակցություն: Դասարանում տեղավորել շարժման համար հարմարեցված աթոռ և սեղան, ինչպես նաև ապահովել, որ Լուսինեն ունենա հեշտ հասանելիություն դասարանի տարբեր հատվածներին: Նրա համար պայմաններ ստեղծել ընդմիջումներին թեթև ֆիզիկական վարժություններ իրականացնելու համար՝ մկանային լարվածությունը թուլացնելու նպատակով:

Հաղորդակցման և սոցիալիզացիայի աջակցության ծրագրեր: Լուսինեի համար ստեղծել սոցիալական խաղեր և խմբային նախագծեր, որոնք կօգնեն նրան շփվել համադասարանցիների հետ: Դասընկերներից մեկին կամ երկուսին կարելի է ներգրավել որպես «սոցիալական ընկերներ», որոնք նրան կաջակցեն դասերի և ընդմիջումների ժամանակ:

Զգացմունքային կարգավորման աջակցություն: Դասարանի մի անկյունում ստեղծել հանգստի գոտի, որը կներառի մեղմ երաժշտություն լսելու հնարավորություն և հանգստացնող խաղալիքներ: Սա կօգնի Լուսինեին վերահսկել իր հույզերը, երբ նա լարվածություն զգա: Այս լուծումները կնպաստեն Լուսինեի ներգրավմանը ուսումնական և սոցիալական գործընթացներում՝ հնարավորություն տալով նրան զարգացնել իր ուժեղ կողմերը և հաղթահարել բազմակի խոչընդոտները:

Դեպք 9

Արմանը 13 տարեկան է, ունի ծանր և բազմակի խանգարումներ, ներառյալ աուտիզմ, խոսքի բացակայություն, գերզգայունություն և շարժման կոորդինացիայի լուրջ խնդիրներ: Արմանը չի կարողանում ինքնուրույն փոխել դիրքերը և օգտագործում է անվասայլակ: Նա հաճախ ցուցաբերում է հուզական պոռթկումներ, երբ փոփոխություններ են լինում նրա առօրյայում: Արմանը սիրում է լսել մեղմ երաժշտություն և դիտել շարժվող պատկերներ՝ հատկապես բնության տեսարաններ:

Առաջ եկող խնդիրներ

- ✓ Իր կարիքներն ու ցանկությունները արտահայտելու բարդություն, որի պատճառը խոսքի բացակայությունը և հաղորդակցման սահմանափակումներն են:
- ✓ Դասարանում և ուսումնական գործընթացում ներգրավման ցածր մակարդակ զանազան խանգարումների հետևանքով:
- ✓ Հույզերի և վարքի կառավարման դժվարություն փոփոխություններին հարմարվելու

ընթացքում:

- ✓ Անվասայլակով տեղաշարժվելու սահմանափակում, որը բարդացնում է դասարանական տարբեր գործողություններին մասնակցելը:

Լուծումներ

Հաղորդակցման այլընտրանքային տեխնոլոգիաների օգտագործում: Արմանի համար կիրառել խոսքային հաղորդակցման սարքավորումներ, որոնք աշխատում են պատկերների և ձայնային ազդանշանների միջոցով: Օրինակ՝ հատուկ պլանշետային հավելվածներ, որտեղ Արմանը կարող է ընտրել պատկերներ՝ իր ցանկությունները և կարիքները հաղորդելու համար: Այս դեպքում արդյունավետության համար պարտադիր է լոգոպեդի աշխատանքը երեխայի հետ:

Մանկավարժական գործընթացի հարմարեցում: Ուսումնական նյութերը ներկայացնել տեսողական, դանդաղ և կրկնվող եղանակով՝ Արմանի գերզգայունությանը հարմարեցնելով: Օրինակ՝ դասընթացի կարևոր գաղափարները կարող են ներկայացվել տեսանյութերի կամ անիմացիաների միջոցով: Նյութերը պետք է լինեն հստակ և կրկնվող, որպեսզի Արմանը կարողանա հեշտությամբ ընկալել:

Հուզական և վարքային կարգավորման աջակցություն: Ստեղծել Արմանի առօրյայի՝ նախապես ծրագրավորված և տեսողական գրաֆիկ, որը ցույց կտա օրվա բոլոր գործողությունները: Սա կօգնի նրան պատրաստվել փոփոխություններին և կանխել հուզական պոռթկումները: Այն դեպքերում, երբ փոփոխություններն անխուսափելի են, ցանկալի է դրանք ներկայացնել տեսողականորեն՝ նախապես տեղեկացնելով նրան:

Սոցիալական միջավայրի հարմարեցում: Դասարանի մյուս սովորողներին Արմանի հետ շփման մեջ ներգրավել պարզ տեսողական հաղորդակցման գործիքների միջոցով: Համադասարանցիներին սովորեցնել պարզ և համբերատար շփման եղանակներ, ինչպես նաև զարգացնել համակեցության հմտություններ:

Ֆիզիկական միջավայրի հարմարեցում: Դասարանը հարմարեցնել այնպես, որ Արմանը կարողանա անվասայլակով ազատ տեղաշարժվել: Նույնիսկ եթե ֆիզիկական ներգրավվածությունը սահմանափակ է, կարելի է կիրառել ինտերակտիվ սարքեր, որոնք Արմանին թույլ կտան մասնակցել գործողություններին՝ հնարավորինս թեթև ֆիզիկական ջանքեր ներդնելով:

Հանգստի գոտու ստեղծում: Դասարանում կամ դպրոցում ստեղծել հատուկ անկյուն՝ մեղմ լույսերով, հանգստացնող պատկերներով և մեղմ երաժշտությամբ, որտեղ Արմանը կարող է լիցքաթափվել, երբ իրեն լարված կամ անհանգիստ է զգում:

Ինքնուրույնության խթանում փոքր քայլերով: Արմանին հնարավորություն տալ փոքր առաջադրանքներ կատարել ուսուցչի կամ օգնականի օգնությամբ: Օրինակ՝ հպվել հատուկ հարմարեցված սարքերին՝ գործողություն սկսելու համար, ինչը կբարձրացնի նրա ինքնավստահությունը: Այս լուծումները պահանջում են համատեղ ջանքեր ուսուցիչների, ուսուցչի օգնականների, աջակցող մասնագետների, համադասարանցիների և ծնողների կողմից՝ Արմանի կրթական և սոցիալական ներառումը առավելագույնս ապահովելու համար: Դրանք թույլ կտան Արմանին իրեն մասնակից զգալ և ստեղծել միջավայր, որտեղ նրա կարիքները և հմտությունները կճանաչվեն ու կաջակցվեն:

Դեպք 10

Մարիամը 15 տարեկան է, ունի մանկական ուղեղային կաթված (տետրապարեզ), որը զուգակցվում է ճանաչողական լուրջ խնդիրներով, խոսքի ամբողջական բացակայությամբ, տեսողության մասնակի և լսողության զգալի խանգարումներով, հուզական և վարքային լուրջ խնդիրներով: Մարիամը տեղաշարժվում է միայն հարմարեցված անվասայլակով՝ մեծահասակների աջակցությամբ: Նա չի կարողանում ինքնուրույն սնվել կամ կատարել որևէ գործողություն առանց օժանդակության: Մարիամը հաճախ հուզվում է փոփոխությունների դեպքում, իսկ առօրյա պլանի խախտումները կարող են հանգեցնել երկարատև հուզական

պոռթկումների: Նրա հիմնական հետաքրքրությունները կապված են հպումային զգայությունների հետ՝ տեքստուրաներ, հարթ մակերևույթներ և ջերմային փոփոխություններ:

Առաջ եկող խնդիրներ

- ✓ Հաղորդակցման լիակատար բացակայություն, որը խանգարում է նրան արտահայտել իր կարիքները, ցանկությունները կամ անհանգստությունները:
- ✓ Տեսողության և լսողության զգալի սահմանափակումներ, որոնք ազդում են ուսումնական նյութերի հասանելիության և ընկալման վրա:
- ✓ Հույզերի ու վարքի կառավարման լուրջ խնդիրներ, որոնք բարդացնում են նրա ինտեգրումը սոցիալական միջավայրում:
- ✓ Ֆիզիկական և ճանաչողական խիստ սահմանափակումներ, որոնք նվազեցնում են նրա ներգրավվածությունը ուսումնական գործընթացում:

Լուծումներ

Հաղորդակցման բարձր տեխնոլոգիաների կիրառում: Հնարավորության պարագայում օգտագործել բազմաշերտ հաղորդակցման սարքավորումներ հատկապես հպումային արձագանքներով: Օրինակ՝ մեծ զգայական էկրաններ կամ կոճակներ, որոնք արձագանքում են հպմանը թրթռումով կամ ձայնային ազդանշանով:

Կիրառել հարմարվող պատկերային քարտեր հեշտ ընկալվող պարզ սիմվոլներով: Կարելի է մշակել հպումային նյութեր (տեքստուրաներով քարտեր), որոնք կօգնեն Մարիամին

ճանաչել հաղորդակցական տարբեր սիմվոլներ:

Ուսումնական նյութերի ամբողջական հարմարեցում: Տեսողության սահմանափակումների փոխհատուցման համար կիրառել գունային բարձր հակադրությամբ պարզ պատկերներ, իսկ լսողական խնդիրների համար օգտագործել տեքստի թեթև թրթռումներ կամ ցածր հաճախականության ձայներ: Ուսումնական նյութերը բաժանել փոքր մասերի, որոնք կարող են իրականացվել հպումային ակտիվացմամբ, օրինակ՝ հատուկ սարքերին դիպչելով՝ ուսումնական գործընթաց սկսելու համար:

Հույզերի և վարքի կարգավորում: Մարիամի համար մշակել խիստ օրակարգ, որը պետք է տեսողականորեն արտահայտել մեծ ձևաչափով և գրաֆիկներով: Կիրառել նաև զգայունության կառավարման մեթոդներ, օրինակ՝ ծանրոցային վերմակներ կամ սենյակում մեղմ լուսավորությամբ հանգստի գոտիներ: Խրախուսել նրան միանալ հատուկ մեթոդաբանությամբ մշակված խաղերին հպումային ակտիվացմամբ:

Ֆիզիկական աջակցություն: Դասարանում ապահովել լիարժեք հասանելիություն, ներառյալ անվասայլակի տեղաշարժի համար հարմարեցված տարածքներ: Հասանելի դարձնել ֆիզիոթերապիայի և էրգոթերապիայի համատեղ ծրագրեր, որոնք կնպաստեն Մարիամի շարժունակության աստիճանական զարգացմանը:

Սոցիալական ինտեգրում և աջակցություն: Հատուկ ծրագիր մշակել համադասարանցիների համար, որը նրանց կտրամադրի Մարիամի հետ հաղորդակցման պարզ գործիքներ պատկերների կամ ժեստերի միջոցով: Ներգրավել նրան խմբային գործողություններում, օրինակ՝ թիմային ուսումնական նախագծերում, որտեղ Մարիամը մասնակցություն կցուցաբերի սիմվոլների ընտրության միջոցով:

Մասնագիտական աջակցություն: Աշխատել աջակցող թիմի հետ, որում ներգրավված են լոգոպեդներ, հոգեբաններ, հատուկ մանկավարժներ, էրգոթերապիստներ և ֆիզիոթերապևտներ՝ ապահովելու ամբողջական և լիարժեք աջակցություն: Ծնողներին տրամադրել համապատասխան տեղեկատվություն՝ Մարիամի հետ տնային միջավայրում

առավել արդյունավետ աշխատելու համար: Այս լուծումները պահանջում են անհատականացված և թիմային միջամտություն ուսուցիչների, աջակցող մասնագետների և համադասարանցիների ներգրավմամբ, ինչը կնպաստի Մարիամի ուսումնական և սոցիալական ներառման առավելագույն արդյունավետությանը՝ նրա կարիքներին համապատասխան:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ուսուցումը և կրթության ապահովումը կրթության առանձնահատուկ պայմանների 3-րդ և 4-րդ աստիճանի մանկավարժահոգեբանական աջակցության կարիք ունեցող սովորողների համար պահանջում են բազմակողմանի մոտեցում, որում համատեղված են համբերությունը, ստեղծագործականությունը և համագործակցությունը: Այս ձեռնարկում ներկայացված գործնական լուծումները նպատակ ունեն հստակեցնել և առաջարկել պարզ լուծումներ՝ աջակցելու ծանր և բազմակի խանգարումներ ունեցող սովորողներին և ապահովելու ներառական ու հասանելի ուսուցում:

Ուսուցիչների, ուսուցչի օգնականների համար կարևոր է հիշել, որ յուրաքանչյուր երեխա ունի իր առանձնահատկությունները, և ուսուցման մոտեցումը պետք է համապատասխանեցվի այդ առանձնահատկություններին: Օրինակ, համագործակցությունը ծնողների և այլ մասնագետների հետ կարևոր է՝ ապահովելու համար համապարփակ աջակցություն և ուսումնական հաջողություն: Լոգոպեդները, հատուկ մանկավարժները, հոգեբանները, էրգոթերապիստները և այլ մասնագետներ կարող են իրենց փորձառությամբ նպաստել ուսուցման գործընթացի անհատականացմանը և ուսանողների կարիքների առավել արդյունավետ բավարարմանը: Այս համատեքստում կարևոր և առաջնային պետք է համարել ԱՈՒՊ-ի դերը և այն լրացնել հնարավորինս անաչառ, հստակ և բացառապես հիմնված երեխայի կարիքի վրա:

Աջակցման տեխնոլոգիաների և հարմարեցված նյութերի կիրառումը ևս կարևոր է

ուսումնական միջավայրի բարելավման համար: Հաղորդակցման սարքերը, ինչպիսիք են խոսք ստեղծող սարքերը կամ համակցված հավելվածները, կարող են օգնել խոսքային սահմանափակումներ ունեցող սովորողներին արտահայտել իրենց կարիքները: Տեսողական և լսողական մեթոդների համատեղ կիրառումը մեծացնում է ուսուցման նյութերի հասանելիությունը և ուսանողների ներգրավվածությունը: Այս մոտեցումը օգնում է նաև ուսուցիչներին հարմարեցնել դասերը՝ ներառելով սովորողների տեսողական, լսողական և շարժողական պահանջներին համապատասխան գործիքներ:

Կրթության առանձնահատուկ պայմանների 3-րդ և 4-րդ աստիճանի մանկավարժահոգեբանական աջակցության կարիք ունեցող սովորողների հետ աշխատանքի ընթացքում համբերատարությունը և համընդհանուր աջակցությունը առաջնահերթ են: Համբերատարությունը թույլ է տալիս ուսուցչին ավելի լավ հասկանալ երեխայի կարիքները, արձագանքել դրանց և ապահովել անհրաժեշտ փոփոխությունները կրթական միջավայրում: Այս համատեքստում ստեղծագործական մոտեցումը ուսուցչին հնարավորություն է տալիս գտնել ոչ ստանդարտ լուծումներ, որոնք կարող են խթանել ուսանողի ներառականությունը և վստահությունը:

Կրթական միջավայրի կազմակերպումը ուսանողների կարիքներին համապատասխան կարևոր է նրանց հուզական կայունությունը պահպանելու համար: Առաջադրանքների ճկունությունը, խրախուսական մեթոդների կիրառումը և կանոնավոր միջոցառումները կարող են մեծապես նպաստել սովորողների մասնակցության և ներգրավվածության բարելավմանը:

Ներառական կրթության հաջողության գրավականը համագործակցությունն է, որը պահանջում է, որ բոլոր մասնակիցները՝ ուսուցիչները, ուսուցչի օգնականները, ծնողները և աջակցող մասնագետները, միասին աշխատեն ուսուցման գործընթացի բարելավման ուղղությամբ: Այսպիսի համակցված մոտեցումը նպաստում է ոչ միայն երեխայի ակադեմիական առաջընթացին, առօրյա գործողությունների կատարման համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը, այլև նրա սոցիալական հմտությունների

զարգացմանը:

Կարևոր է նշել, որ այս գործընթացը ուսուցիչներից, ուսուցչի օգնականներից և աջակցող մասնագետներից պահանջում է շարունակական ջանքեր և պատրաստակամություն՝ շարունակաբար բարելավելու իրենց մասնագիտական գիտելիքները և հմտությունները: Մասնագիտական զարգացման ծրագրերին, համաժողովներին մասնակցությունը և համապատասխան նյութերի ուսումնասիրությունը ուսուցիչներին հնարավորություն են տալիս աշխատել նորարարական և արդյունավետ մեթոդներով, քանի որ սա ժամանակի հրամայական է:

Կրթության ոլորտում նորամուծությունների կիրառումը համբերատարության և համագործակցության հետ ստեղծում է կրթական միջավայր, որտեղ յուրաքանչյուրը, անկախ իր ֆիզիկական կամ մտավոր կարողություններից, ունի լիարժեք հաջողության հասնելու հնարավորություն: Այդպիսի միջավայրի ստեղծումը կարևոր է ոչ միայն սովորողի, այլև ողջ կրթական հաստատության համար, քանի որ այն ամրապնդում է մարդու կրթության իրավունքի սկզբունքը՝ ապահովելով յուրաքանչյուր երեխայի համարժեք մասնակցությունը ուսուցման գործընթացում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սվաջյան Ա. Հ., Ադամյան Հ. Ա., Գարեգինյան Ա. Ա., Մարգարյան Լ. Հ., Հակոբյան Լ. Գ., Հարությունյան Գ. Հ. (2024): «Անհատական ուսուցման պլան» մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. Երևան: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 44 էջ:
2. Bambara, L. M., & Kern, L. (2021). *Positive behavior support in the classroom: Principles and practices*. Guilford Press.
3. Brown, L., & Snell, M. E. (2022). *Instruction of Students with Severe Disabilities*.
4. Case-Smith, J., & Clifford O'Brien, J. (2014). *Occupational Therapy for Children and Adolescents*. Elsevier Health Sciences.
5. Crone, D. A., & Horner, R. H. (2015). *Functional behavior assessment and behavior intervention plans*. Guilford Press.
6. Farrell, P., & Ainscow, M. (2019). *Inclusion and psychological perspectives for children with special needs*. Routledge.
7. Gargiulo, R. M., & Bouck, E. C. (2019). Special education in contemporary society: An introduction to exceptionality. SAGE Publications.
8. Horner, R., Sugai, G., & Anderson, C. (2020). *Positive Behavioral Interventions and Supports: Foundations and Practices*. Educational Research Review, 18(2), 150-168.
9. Mitchell, D. (2020). What Really Works in Special and Inclusive Education. Routledge.
10. Turnbull, H. R., Turnbull, A. P., & Wehmeyer, M. L. (2020). *Exceptional Lives: Special Education in Today's Schools*.
11. UNESCO. (2017). A guide for ensuring inclusion and equity in education. United Nations Educational, Scientific, and Cultural Organization.
12. World Health Organization. (2011). World Report on Disability. Geneva: W

Հարությունյան Մ.Ռ.

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ձեռնարկ ուսուցիչների, աջակցող թիմի մասնագետների, ուսուցչի օգնականների, մանկավարժական կրթություն ստացող ուսանողների և ծնողների համար

Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 150:
Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում,
Երևան, Դ.Մալյան 43